ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԼՈՒՄԻՆԵ ՂՌԵԶՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու, ՀԱԻ

ՊԱՏԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԵԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԳՈՒՄՆԵՐՈՒՄ

Խոսքի զորության, հմայական ներգործության հավատալիքից են սերում ժողովրդական հմայական բանաձեւերը՝ անեծքները, օրհնանքները, բարեմաղթանքները, երդումները, ինչպես նաեւ հմայական աղոթքները, որոնք ցանկության իրականացման խոսքեր են՝ օժտված հմայական անկասելի զորությամբ, ուղղված տվյալ առարկայի, անձի եւ իրադրության փոփոխությանը[1]:

Անեծքների, օրհնանքների, երդումների ծագումնաբանական ընդհանրությունը հավատքն է՝ խոսքի կախարդական զորությամբ պայմանավորված: Բոլոր ժամանակներում էլ խոսքը եղել է մարդու՝ ընության դեմ մղած պայքարի միջոց: Իբրեւ «ցանկության հմայական խոսքեր»[2]՝ անեծքները, օրհնանքներն ու երդումները շատ կողմերով առնչվում են ժողովրդական աշխարհընկալումներին, մասնավորապես հնագույն հավատալիքներին: Այսպես, Թալասում հավատում են, որ եթե մեկն օձի

---

[1] Հոդվածում օգտագործվում են հետեւյալ համառոտագրությունները. ԱՀ - Ազգագրական հանդես, Զ. գիրք, Թիֆլիս, 1900. ԱՈՒ - **Հ. Ալլահվերդյան**, Ուլնիա կամ Զեյթուն, Կ. Պոլիս, 1884. ԲԳ - «Բյուրակն» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1900. ԳԱԹ - Գրականության եւ արվեստի թանգարան. ԷԱԺԱ - Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա., Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901. ԷԱԺԶ - Նույնը, հ. Զ., Մոսկվա-Վաղարշապատ, 1906. ԹՄԿ - Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885. ԺԱԲ - Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տ. Վարդանյանց, Թիֆլիս, 1900. ՀԱԲ - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. ՀԺԱ - Հայ ժողովրդական ավանդություններ, ժողովածու, Տ. Նավասարդյանց, Երեւան, 1883. ՀԺՀ VI - Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք VI, Թիֆլիս, 1890. ՀԷՖ – Հիշատակարան Էվերեկ-Ֆենեսեի, հավաքեց Ալեքս Գրիգորյան, Փարիզ, 1963. ՉԺԲ - Չահարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923:

[2] Տե՛ս **Ս. Հարությունյան**, Անեծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երեւան, 1975, էջ 5-122:

հանդիպի եւ ասի «գիս չխայթող օձը հազար ապրի»[3]*, ապա օձը նրան չի խայթի: Սա խոսքի ուժի նկատմամբ հավատք է, ուժ, որին օձն անգամ ենթարկվում է, այսինքն՝խոսքն ամենազոր է:*

Հմայական այս բանաձեւերը մարդկային կյանքի էական կողմերի նկատմամբ մարդու ակտիվ վերաբերմունքի բանավոր արտահայտություններ են, որոնք հետագայում փոխանցվում են գրին: Գիրը հին ժողովուրդների կենցաղում պաշտվում էր, որտեղից եւ ձեւավորվում է հավատք գրի հմայական զորության վերաբերյալ: Հիշյալ երկու հավատալիքները, սակայն, երբեք չեն բացառել միմյանց գոյությունը, եւ այդ է պատճառը, որ խոսքի ու գրի զորության հավատալիքները շարունակում են հարատեւել մինչեւ մեր օրերը:

Անեծքների, օրհնանքների եւ երդումների բանավոր հարատեւումը պայմանավորված է ժողովրդական բանահյուսության հարուստ նմուշներով, որոնք ստեղծվել եւ պահպանվել են ժողովրդի լայն զանգվածների շրջանում, ապա սերնդեսերունդ փոխանցվել են՝ տարբեր ժամանակներում գրի առնվելով բանագետ-բանահավաքների կողմից, իսկ գրավոր հարատեւումն ու ավանդումը հավաստված ու հաստատված են հնագույն, հին եւ ուշ միջնադարյան գրավոր հուշարձաններում (սեպագիր եւ վիմագիր արձանագրություններ, պայմանագրեր, կտակներ, դաշնագրեր, կալվածագրեր եւ այլն):

Հմայական բանահյուսությունը մեծ տեղ է գրավում մասնավորապես հին ժողովուրդների վաղնջական հավատալիքների, կրոնական պատկերացումների, աշխարհընկալումների հետազոտության բնագավառում եւ պատմամշակութային կարեւոր արժեք է ներկայացնում նրանց նախնադարյան մտածողության, բանաստեղծական ընկալումների բացահայտման եւ լուսաբանման բնագավառներում:

Ժողովրդական բանահյուսության այս հիմնատեսակներն աչքի են ընկնում իրենց հակիրճությամբ, պատկերավորությամբ, իմաստային խորությամբ եւ լայնորեն օգտագործվում են առօրյա ժողովրդախոսակցական լեզվում:

Հմայական բանահյուսության որոշ ժանրեր՝ անեծք, օրհնանք, բարեմաղթություն եւ հմայական աղոթքներ, հայ բանագիտության մեջ հետազոտել է անվանի հայագետ, բանագետ Սարգիս Հարությունյանը «Անեծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» գրքում եւ «Հայ հմայական եւ ժողովրդական աղոթքներ» համահավաք ժողովածուում: Իսկ մյուս

[3] «Բյուրակն», 1900, էջ 132:

կարեւոր՝ երդումների ժանրային, գիտական դասակարգումը, ոճաբանական եւ կառուցվածքային հատկանիշների բացահայտումները, կիրառական, իմաստային տիպերն ու խմբերը ուսումնասիրվում են մեր կողմից:

Անդրադառնալով բուն նյութին՝ անեծքներում եւ երդումներում տեղ գտած պատժի տեսակներին՝ չէինք կարող ուղղակիորեն չանդրադառնալ Ս. Հարությունյանի տեսական որոշ բնութագրումներին, որոնցով էլ առաջնորդվել ենք մեր քննությունն իրականացնելիս[4]:

Անեծքներում եւ երդումներում առկա պատժի ցանկություններն, անկախ իրենց դրսեւորման ձեւերից, բովանդակությամբ բաժանվում են մի քանի տեսակների:

Քանի որ անեծքների ու երդումների, ինչպես նաեւ հմայական բանահյուսության մյուս տեսակների կիրառական հատկանիշներից մեկը ենթակա անձի, կենդանու կամ առարկայի առկա վիճակը մեկ ուրիշով փոխարինելու ցանկությունն է, ապա բնական է, որ անեծքներում եւ երդումներում պատժի ցանկության նպատակը պետք է լինի անիծվողի ու երդվողի ներկա վիճակը վատթարագույնով փոխարինելը: Եվ իսկապես, այդ հանգամանքը երեւան է գալիս գրեթե բոլոր անեծքներում եւ երդումներում: Յուրաքանչյուր անիծող, օրհնող, ինչպես նաեւ երդվող կամ երդվեցնող հավատացել է երդման հմայական գերբնական զորությանն ու դրա իրագործմանը, որն ըստ Ս. Հարությունյանի՝ «...գալիս է խոսքի հմայական ներգործության ենթադրյալ զորության հավատալիքից»[5]:

«Ամենախիստ պատիժը, որ սովորաբար ենթադրում է մարդկային միտքը եւ սահմանափակված է հասարակական-իրավաբանական օրենքներով, մահվան դատապարտումն է»[6]: Այս պատժով է, որ մարդու կենդանի գոյությունը մեկընդմիշտ փոխարինվում է մահվամբ, «...որ եւ կազմում է մարդկային մեծագույն ողբերգությունների հիմքը՝ սկզբից մինչեւ մեր օրերը»[7]:

Մահվան ցանկությունն իր ամենատարբեր դրսեւորումներով տեղ է գտել բազում անեծքներում եւ երդումներում:

Երբ անիծողն իր զայրույթի փոթորկահույզ խռովքի պահին կամենում է ամենախիստ ձեւով պատժված տեսնել իրեն բարկացնողին, նրան է ուղղում ամենադաժան եղանակներով մեռնելու անեծքներ: Ընդ որում՝ դրանք կարող են լինել ինքնաբերաբար կատարվող փորձանք-պատա-

---

[4] Տե՛ս **Ս. Հարությունյան**, Անեծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երեւան, 1975:

[5] Անդ, էջ 8:

[6] Անդ, էջ 199:

[7] Անդ:

հարներ, մեկի կողմից իրագործվող կանխամտածված սպանություններ: Այն առավել տեսանելի դարձնելու նպատակով ներկայացնենք թե մեկ եւ թե մյուս ձեւերի մահվան պատիժներ ցանկացող անեծքների օրինակներ. «Շներաց-գիլերաց ըլլես» (ԷԱԺԶ, 317), «Քսան կտուր ըլլիս» (ԹՄԿ, 195), «Քոռ դանկի գաս» (ՀԺՀ, VI 317), «Ավալ-թավալ մեռնես» (ԷԱԺԶ, 315), «Մահվան դեղ ուտես» (ՀԺԱ, 7), «Միսըդ մանգյանեն հնգնի» (անձն. հավաք.), «Ջրով ու կրակով էրթաս» (ԷԱԺԶ, 314), «Սեւ ճալատներ (դահիճներ) քե պրտեն» (ԷԱԺԶ, 311), «Ժուռ ու մուռ մեռնես» (ԷԱԺԶ, 319), «Բեմուրազ մեռնիս» (ՀԺՀ, 140), «Ճիվան (երիտասարդ) կոտրվիս» (ԲԳ, 330), «Գետնին հատակը եղնաս» (ԲԳ, 331), «Թաժա մեռել էլնես» (ԷԱԺԶ, 310), «Սեւ ճաղգ (դագաղ) մտնես» (ԷԱԺԶ, 312), «Գլուխդ գլխափոսերը մննի» (ՀԺԱ, 7), «Անծղներ աչքերտ ուտին» (ԷԱԺԶ, 313), «Գոռդ չդադրես» (անձն. հավաք), «Արժանի չըլլիս խուղին» (ԹՄԿ, 186) եւ այլն:

Դաժան եղանակներով մեռնելու ցանկությունն է արտահայտված նաեւ այն երդումներում, որոնց բաղադրիչները անեծքներ են: Երբ երդվողը կամենում է դիմացինին ապացուցել իր անմեղությունը, իրավացիությունը, հետեւաբար ինքնանիծման պայման է դնում: Այստեղ հարկ է նկատել, որ որոշակի պայմանով անեծքներն իրենց կառուցվածքային տիպերով նույնանում են երդումներին, այսինքն՝ բաղկացած են որոշակի պայմանից եւ իրադրությունից: Եվ եթե պայմանով անեծքներում պայմանն ու անեծքն ուղղված են դիմացինին, այսինքն՝ անիծվողին, ապա անեծքով երդման դեպքում ե՛ւ պայմանի, ե՛ւ անեծքի կրողը երդվողն է, այսինքն՝ երդվողն արդեն իսկ անեծքը վերցնում է իր վրա: Օրինակ՝ «Իմ փայ ըրեքնակը խվարի թա ես...» (ԱՀԶ, 344), «Խավարեմ, թե խաբար եմ» (ՀԱԲ, 20), «Գետինն անցնիմ, թե սուտ եմ ասում» (ԷԱԺԱ, 140), «Խեր չտեսնեմ իմ ումը ու յարեվիցն, ագեր սուտ ասեմ» (ԶԺԲ, 68), «Իրվաս թըղ չըլուսնօ» (ՀԱԲ, 16), «Իրվաս արիվ թըղ չը ձիթի» (ՀԱԲ, 16), «Ջայել արեւիցս խեր չտենամ, թե տեսեր եմ» (անձն. հավաք.), «Սաղ-սալամաթ գյուղ չհասնեմ, թե խաբար եմ» (ՀԱԲ, 20), «Գյուլլախորով լինեմ, թէ...» («Մեղու Հայաստանի», 1886, թ. 53), «Քոռ դանակի ռաստ գամ» (անձն. հավաք.), «Գոռ չգդնեմ» (ԶԺԲ, 68) եւ այլն:

Բերված օրինակներում եւ առհասարակ այլ անեծքներում մահվան ձեւերը տարբեր են: Դրանք մեծ մասամբ լինելով բնական ու արհեստական աղետների հետեւանքներ՝ ունեն ողբերգականության եւ դրամատիզմի շեշտադրումներ (ջահել, անմուրազ մեռնել, անգերեզման եւ անհիշատակ մնալ, անթաղ ու անտեր մնալ եւ այլն): Նման հանգամանքներն

առավել քան ընդգծում են ցանկալի պատժի անողոք խստությունը, որն անիծողի եւ երդվողի բուն նպատակն է: Անեծքներում եւ երդումներում մահվամբ պատժելու ցանկությունը ոչ միայն անիծվողին եւ երդվողին է ուղղված, այլեւ նրանց ամենամոտ հարազատներին, հատկապես զավակներին, եղբայրներին եւ ծնողներին: Դրանց մեջ անիծողը ցանկանում է մահվան ամենասոսկալի տեսարանների ենթարկված տեսնել իր հակառակորդին, իսկ երդվողը հենց իր մտերիմ հարազատներին՝ դրանով փափագելով խստագույնս պատժել անիծվողին եւ երդվողին. «Մինուճարդ մեռնի» (ՀԺԱ, 6), «Բալեդ թունդիրն ընկնի» (ՀԺԱ, 4), «Քու օխտը ախպերը մի պատանըմ դնեմ» (ԱՀ, IX 125), «Բալեդ աղաքիդ թփռտորիկ գա» (ՀԺԱ, 5), «Ազիզդ ազիզ օր մեռնի» (ԶԺԲ, 65), «Քու ախպերը թաղեմ» (ԳԱԹ, Քամալյանի ֆոնդ II, 84), «Քո մառթը թաղեմ» (անձն. հավաք.), «Բալես մեռնի, թե սուտ եմ ասում» (անձն. հավաք.), «Ախպորըս խերը վեչ տեսնամ» (Ս. Հարությունյանի անձն. արխիվ), «Տղիս թաղեմ, թե...» (ՀԱԲ, 16), «Ջուջըխնէս խերը թըղ չըդիսնամ» (ՀԱԲ, 16), «Մինուճարիս խերը չտեսնամ, թե սուտ ա» (ՀԱԲ, 20), «Մորիցս զրկվեմ, թե սուտ ա» (ՀԱԲ, 20), «Թե ես քու վրեն զուր ու բուխտան (զրպարտություն) կենիմ, իմ աղբեր մեռնի» (ԷԱԺԶ, 337), «Իմ ազիզ ճամփորթի տեսքին ոչ արժանի ըլիմ, թե...» (ԱՀ, XI 118) եւ այլն: Դարձյալ չարամիտ ու ողբերգական տրամադրություններ, որ առաջ են գալիս սեփական զավակի, եղբոր, հարազատի մահվան ականատեսը լինելուց: Հենց այդպիսի ծանր ու ցնցող պատժի է փափագում ենթարկել անիծողն իր հակառակորդին, իսկ երդվողը՝իրեն:

Պատժի այս խստագույն տեսակը, որի նպատակն է անիծվողի եւ երդվողի կենդանի վիճակը փոխարինել հակադրությամբ՝ մահվամբ, անեծքներում եւ երդումներում միակն ու վերջնականը չէ: Ճիշտ է, անեծքների եւ երդումների ցանկալի պատժի այլ տեսակներից ոչ մեկը թեպետ չունի վիճակների նման ծայրահեղ հակադրությունների փոխարկման միտում, այդուհանդերձ դրանք եւս ենթադրում են անիծվողի եւ երդվողի ներկա վիճակի փոխարինումը վատթարագույնով, ինչ բովանդակությամբ էլ այն արտահայտվելիս լինի:

Մահապատժի ցանկությունից հետո անեծքներում եւ երդումներում կարեւոր տեղ է գրավում անիծվողին ու երդվողին ծանր հիվանդությամբ պատժելու փափագը: Անեծքի միտումն է «անիծվողի առողջ վիճակը փոխարինված տեսնել զանազան ծանր ու անբուժելի համարած

հիվանդություններով»[8]. «Ծակծկիս՝ դեղին ջրերդ էրթա» (ԷԱԺԱ, 136), «Քրքրվես՝ միսն օսկոիդ ձեն տա» (անձն. հավաք.), «Ջանիդ վրեն տրորվես» (ՀԺԱ, 8), «Կարմիր քամին առնես» (ԷԱԺԶ, 315), «Աստվածածնի յարեն առնես» (ԱՀ, XIX 114), «Դժար ցավի տիրանաս» (ԹՄԿ, 188), «Կաղդես, թեւերիդ միսն ուտես» (անձն. հավաք.) եւ այլն: Նույն իրավիճակն է ցանկանում երդվողն իրեն. «Ցավ ու չոռը վրես թափի, թե թողնեմ գնալու» (ԷԱԺԱ, 143), «Քոռ էշիմ արեւին, թա սուտ եմ ասում» (ԱՀԶ, 344), «Էշքիս քեորնա» (ՀԷՖ, 886), «Օրթումս թե սուտ ա, թո քոռանամ» (ՀԱԲ, 20), «Փողը բարձիս տակ ուտեմ, թե ճիշտ չեմ ասում» (ՀԱԲ, 20), «Ծակծկվեմ՝ թե տեհել եմ» (ՀԱԲ, 20), «Գունդ ու կծիկ ըլնեմ, թե որ տիրոջը չասեմ» (ԷԱԺԱ, 140), «Թե չտաս քրքրվես, տեղին ջրերդ էրթա» (ԷԱԺԱ, 141) եւ այլն:

Ինչպես տեսնում ենք, անիծվողին ու երդվողին կամենում են մարմնական ու հոգեկան ամենատարբեր հիվանդություններ, որոնք անբուժելի են համարվել:

Մահվան եւ հիվանդության պատժի տեսակներից զատ հմայական վերոնշյալ բանաձեւերի այս տեսակներում նույնքան առաջնակարգ տեղ են գրավում սոցիալական եւ կրոնաբարոյական պատիժների ցանկալի ձեւերը, որոնք մակաբերվում են իրական կյանքի երեւույթներից ու կրոնական, սնահավատական պատկերացումներից:

«Սոցիալական պատժի ցանկությունների միտումն է՝ դարձյալ շրջել, փոխել անիծվող անձի նյութական տվյալ վիճակը սոցիալական ծանր ու ողբալի կացությամբ»[9]: Ահա անեծքների մի շարք, ուր անիծողը փափագում է անիծվողին տեսնել անտեր ու թափառական, մի կտոր հացի կարոտ մուրացկան. «Պատերի տակը մնաս» (ՀԺՀ, VI 140), «Ժամուն դուռները մուրաս» (ԱՀ, IX 195), «Անոթի չուն էղնիս» (ԷԱԺԶ, 320), «Աստած հացդ կտրի» (ԱՀ, XI 122), «Յոթ տարի ճարիս, մուրիս, տոպըրլիդ մեջ հաց չը տեսնիս» (ԷԱԺԶ, 313) եւ այլն:

Նույնն է փափագում երդվողն իրեն՝ իր անմեղությունն ապացուցելու համար: «Էսը խաց յոթ տուռն ինեմ ձեռըս չինի» (ՀԱԲ, 8), «Եթիմ մնամ, թե սյութ կասեմ» (ԷԱԺԶ, 313), «Անժառանգ մեռնեմ, թե...» («Մեղու Հայաստանի», 1886, թ. 53), «Ձեռս կուշտ փորի չդնեմ, թե սուտ ա» (ՀԱԲ, 20) եւ այլն:

Ահա անեծքների մի քանի խումբ, որով անիծողը կամենում է անիծվողին միշտ դառը դատելիս եւ դատարկ նստելիս տեսնել. «Շատ դա-

[8] Անդ, էջ 203:
[9] Անդ, էջ 208:

տիս՝ քիչ ուտիս» (ԺԱԲ, 123), «Դառը դատիս, մահրում (զուրկ) նստիս» (ԷԱԺԶ, 318), «Ցորեն ցանես՝ զիվան քյաղես» (ԷԱԺԶ, 316), «Շատ աշխատես՝ քիչ ուտես, քչիցն էլ մահրում նստես» (ԷԱԺԶ, 318) եւ այլն:

Նույն իմաստն է արտահայտված նաեւ հետեւյալ երդումներում. «Դատած-բանածս աղվսի շլակն հլնի, թե ես խաբար եմ» (անձն. հավաք.), «Հելածս քիլ ու քամուն հլնի, թե...» (անձն. հավաք.) եւ այլն:

Մեկ այլ խումբ անեծքներում եւ երդումներում անիծվողի ու երդվողի նկատմամբ արտահայտված է ունեցվածքից ընդմիշտ զրկվելու ցանկություն. «Տանրդ տեղը պոստան ցանես» (ԺԱԲ, 123), «Հորդ օջաղը բոստանատեղ դառնա» (ԱՀ, XI 122), «Ուճոխիդ (օջախ) գիր մուկ բիլլե» (ԱՈՒ,126), «Քու դուս էկած օջախը բըրընկսվերվի» (ԱՀ, XI 122), «Ճիրաքտ հյանցի, օճաղդ քյանդվի» (ՀԺՀ, VII 116), «Հյուրթդ ցյաքվի, տոնըտ քշլած մնա» (ՀԺՀ, VII 116), «Ստի տունը...» (ՀԱԲ, 24), «Տունս քանդվի, թե ես խառնեմ էտ բանումը» (ՀԱԲ, 20) եւ այլն:

Ժողովրդական անեծքներում եւ երդումներում զգալի տեղ են գրավում կրոնա-բարոյական բնույթի պատժի ցանկությունները, որոնց մեջ արտահայտվում է երկու տեսակի ցանկություն՝ առաջինը իրական կյանքում առկա բարոյական հոռի երեւույթներն են, որ փափագվում են անիծվողին իբրեւ պատիժ: Օրինակ՝ «Օխտը կնիկ առնես» (ՀԺՀ, VI 141), «Օխտը էրիկ անցնես» (ԷԱԺԶ, 312), «Մի ջուխտ մաշկով օխտը դուռ մտնես, օխտիցն էլ մահրում (զուրկ) մնաս» (ԷԱԺԶ, 318), «Դու քու կնիկ գինճ ու միս էղնիք, իրար ուտիք» (ԷԱԺԶ, 313), «Երեսս ետեւս դառնա, թե պահեմ, չասեմ» (ԷԱԺԱ, 140), «Մուրազիս չհասնեմ, թե որ» (ՀԱԲ, 4) եւ այլն: Երկրորդը զուտ կրոնական-սնահավատական ըմբռնումների ու պատկերացումների վրա հիմնված պատժի ցանկություններ են, որոնք ներազդում էին հավատացյալ եւ սնոտիապաշտ ժողովրդի մտքի ու երեւակայության վրա: Նման բովանդակությամբ անեծքներում եւ երդումներում առանձնապես մեծ տեղ են գրավում հանդերձյալ կյանքում դժոխքի ու չար ոգիների տնօրինությանը դատապարտելու պատժի զանազան ձեւերը: Օրինակ՝ «Դժոխքի փայ էղնիս» (ԷԱԺԶ, 308), «Սատանի փայ ու բաժին հլնես» (անձն. հավաք.), «Զարի դավթարըմը գրվես» (ԱՀ, XI 124), «Կպրե կարաս պատիս» (ԷԱԺԶ, 308), «Դատաստանեն սեւ յերես յելնիս» (ԷԱԺԶ, 308), «Դատաստանըն պարտըկոն նըս» (ԱՈՒ, 119), «Արքայութնա էրեսը չտեսնեմ», «Առածս հաղորդս չարփմըշ էնե» (ՀԷՖ, 886), «Խոկյիս՝սատանին տամ» (ՀԱԲ, 4), «Բաբելական կրակին գամ, թե ուրանամ» (ԷԱԺԱ, 140), «Դժուխկի փայ ըլիմ, թե...» (ԹՄԿ, 198), «Թե

սուտ կըսիմ իմ հոգին դժոխքի ճխնատուն էղնի» (ԷԱԺԶ, 337) եւ այլն:

Անեծքներում եւ երդումներում կարեւոր տեղ են գրավում աստծո, սրբերի, զանազան չար ու բարի ոգիների հասցրած պատիժները. «Աստծու սրին դյուշ ի իգաս» (ԲԳ, 331), «Աստծու ղազաբին (զայրույթ) գաս» (ՀԺՀ, VI 142), «Աստված պելադ (պատիժ) տա» (ՀԺՀ, VIII 105), «Խաչը քե քըրքըրի» (ԷԱԺԶ, 310), «Պասդ աստված ղաբուլ չանե» (ԷԱԺԱ, 138), «Տերտերի կարքը քեզի գունդ ու կծիկ ածի» (ԶԺԲ, 67), «Սատանեն քյո թորվան խեր տանի» (ԷԱԺԶ, 315), «Աստված պատիժս տա, թե խաբար եմ» (ՀԱԲ, 20), «Օխտն անունը պատիժս տա, թե յետ մնամ գործիցս» (ԷԱԺԱ, 143), «Քյրիստոս ուր տատաստանով վրես խռով կենա» (ՀԱԲ, 8),«Կյապրել խրիշտըկի փողի ձենին առժան չըլնեմ» (ՀԱԲ, 8) եւ այլն:

Այսպիսով՝անեծքները եւ երդումները, հանդիսանալով հմայական-կիրառական բանահյուսության նախնական կարեւոր տեսակներից, տարածված են եղել աշխարհի բոլոր ժողովուրդների կենցաղում եւ հնագույն ժամանակներից պահպանել են իրենց կիրառական գործառույթը ու ցայսօր էլ շարունակում են կենցաղավարել ժողովրդական կյանքի տարբեր բնագավառներում: Հիմնականում սրանք են ժողովրդի կենցաղում առկա պատժի այն տեսակները, որոնք գերիշխող տեղ են գրավում հայ ժողովրդական անեծքներում եւ երդումներում:

РЕЗЮМЕ

Этимологическая общность проклятий, благословений, клятв заключается в вере в магическую мощь слова. Подобно словам пожеланий, они наделены магической силой и направлены на изменение состояния предмета, лица и обстоятельств. В статье представлены бытующие в народе такие виды наказания, большинство из которых проявляются в армянских народных проклятиях и клятвах.

SUMMARY

The etymological generality of curses, blessings, and vows lies in believing in the magical power of the word. As words of wishes, they are endowed with magical power and aim at changing the condition of a subject, person and circumstances. The article presents such types of punishments that are common among the people, most of which are manifested in Armenian folk curses and vows.